## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/11

ք. Երևան «13» 04 2020թ.

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը ի դեմս տնօրեն Ռ. Ոսկանյանի, որը գործում է պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Ա/Ձ Դավիթ Հովհաննիսյան Հովհաննեսին, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Գրասենյակային նյութերի մատակարարման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ապրանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքների համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ապրանքների մատակարարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ապրանքների արդյունքը, իսկ ապրանքների արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ապրանքների արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ապրանքների մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործընթացի ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքների մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-

ակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատակարարման ենթակա ապրանքների գինը կազմում է 91880 ( իննսունմեկ հազար ութ հարյուր ութսուն ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ապրանքների մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ապրանքների մատակարարման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքների գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը

ձգձգվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ ձեռք բերվող ապրանքների միավորի գնի կամ պայմանագրի գնի աճի արիեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ապրանքների մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքների օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքների մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

* Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

* 7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

* 7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ՇՄՆ «ԲԾԻԳ» ՊՀ**

ք.Երևան, Արմենակյան 129

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011064087

ՀՎՀՀ 01573524

Էլ. հասցե՝ info@cep.am

ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի տեղակալ

***Ռ. Ոսկանյան***

---------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Դավիթ Հովհաննեսի Հովհաննիսյան» ԱՁ**

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ

Հ/Հ՝ 11813012607100

ՀՎՀՀ՝ 20179887

Էլ. հասցե՝ hovhannisyan8118@gmail.com

**Տնօրեն՝ Դ. Հովհաննիսյան**

---------------------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« » 2020 թ. կնքված
ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/11 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքների | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Անվանումը | Տեխնիկական բնութագիր | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Մատակարարման | |
| | | | | | | | Ենթակա քանակը | Ժամկետը** |
| 1 | 30192121/1 | Գրիչ գնդիկավոր | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 4900 | 100 | - | մարտ |
| | | | | | | | 32 | ապրիլ |
| | | | | | | | 25 | հուլիս |
| | | | | | | | 43 | հոկտեմբեր |
| 2 | 30197111/1 | Կարիչի մետաղալարե կապեր, փոքր | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | տուփ | 3600 | 40 | - | մարտ |
| | | | | | | | 15 | ապրիլ |
| | | | | | | | 12 | հուլիս |
| | | | | | | | 13 | հոկտեմբեր |
| 3 | 30197231/1 | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 16000 | 2000 | - | մարտ |
| | | | | | | | 700 | ապրիլ |
| | | | | | | | 560 | հուլիս |
| | | | | | | | 740 | հոկտեմբեր |
| 4 | 30197322/1 | Կարիչներ 20-50 թերթի համար | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 8000 | 4 | - | մարտ |
| | | | | | | | 2 | ապրիլ |
| | | | | | | | 1 | հուլիս |
| | | | | | | | 1 | հոկտեմբեր |
| 6 | 30199232/1 | Ծրար, մեծ, A4 ձևաչափի համար | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 4900 | 50 | - | մարտ |
| | | | | | | | 38 | ապրիլ |
| | | | | | | | 5 | հուլիս |
| | | | | | | | 7 | հոկտեմբեր |
| 7 | 30192220/1 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 4500 | 30 | - | մարտ |
| | | | | | | | 18 | ապրիլ |
| | | | | | | | 8 | հուլիս |
| | | | | | | | 4 | հոկտեմբեր |
| 9 | 30193700/1 | Թղթադարակ, հարկերով, պլաստմասե | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | տուփ | 13000 | 4 | - | մարտ |
| | | | | | | | 2 | ապրիլ |
| | | | | | | | 1 | հուլիս |
| | | | | | | | 1 | հոկտեմբեր |
| 10 | 30197112/1 | Կարիչի մետաղալարե կապեր, միջին | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 6000 | 40 | - | մարտ |
| | | | | | | | 25 | ապրիլ |
| | | | | | | | 10 | հուլիս |
| | | | | | | | 5 | հոկտեմբեր |
| 11 | 30199230/1 | Նամակի ծրար, A5 ձևաչափի | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 9600 | 200 | - | մարտ |
| | | | | | | | 57 | ապրիլ |
| | | | | | | | 40 | հուլիս |
| | | | | | | | 103 | հոկտեմբեր |
| 12 | 30199420/1 | Թուղթ նշումների համար, սոսնձվածքով | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 2980 | 20 | - | մարտ |
| | | | | | | | 10 | ապրիլ |
| | | | | | | | 6 | հուլիս |
| | | | | | | | 4 | հոկտեմբեր |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | 30192114/1 | Թանաք,կնիքի բարձիկի համար | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 600 | 2 | - | Մարտ |
| | | | | | | | 1 | ապրիլ |
| | | | | | | | 1 | Հուլիս |
| | | | | | | | - | հոկտեմբեր |
| 17 | 30192128/1 | Գրիչ գելային | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 10000 | 100 | - | Մարտ |
| | | | | | | | 45 | ապրիլ |
| | | | | | | | 25 | Հուլիս |
| | | | | | | | 30 | հոկտեմբեր |
| 18 | 30141200/1 | Հաշվասարք գրասենյակային | Ներկայացվում է ստորև՝ աղյուսակ մեկում | հատ | 7800 | 2 | - | Մարտ |
| | | | | | | | 2 | ապրիլ |
| | | | | | | | - | Հուլիս |
| | | | | | | | - | հոկտեմբեր |

** ապրանքների մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան 2020թ. դեկտեմբերի 25-ը:*

Աղյուսակ 1.

| | Գնման առարկայի | |
|---|---|---|
| | Անվանումը | Բնութագիրը* |
| 1 | Գրիչ գնդիկավոր | Գրիչ գնդիկավոր 1մմ ծայրով, սև, կապույտ, կարմիր միջուկներով, պլաստմասե իրանով, չափսը՝ 14սմ: Pensan 1010 ֆիրմայի կամ համարժեք |
| 2 | Կարիչի մետաղալարե կապեր, փոքր | Կարիչի մետաղալարե կապեր(փոքր), բարձրորակ պողպատից, մինչև 20 թերթ 80գ/մ²–անոց թուղթ կարելու համար, № 10 չափի: Փաթեթավորված ստվարաթղթե տուփի մեջ 1000 հատ քանակով: Kangaro մակնիշի կամ համարժեք: |
| 3 | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ 40 միկրոն, թափանցիկ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորություն: |
| 4 | Կարիչներ 20-50 թերթի համար | Գրասենյակային կարիչ մինչև 50 թերթ 80գ/մ²–անոց թուղթ կարելու համար, սեղանին կանգնող, նախատեսված № 24/6 չափի մետաղալարերի համար, Maped մակնիշի կամ համարժեքը: |
| 6 | Ծրար, մեծ, A4 չափի թղթի համար | Ծրար չթափանցող A4 չափի(210x297)մմ թղթի համար, առանց գրությունների, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, առանց պատուհանի, սպիտակ, 1մ² մակերեսը՝ 100 գ զանգվածով, ինքնասոսնձվող |
| 7 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մմ գրասենյակային, փոքր | Պոլիմերային ինքնակպչուն գրասենյակային ժապավեն: Գլանափաթեթված, 19մմ լայնությամբ, երկարությունը 36մ: սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,06 մմ: |
| 9 | Թղթադարակ, հարկերով, պլաստմասե | Պլաստմասե թղթադարակ, 3 դարակով, նախատեսված A4 (210 x 297) մմ չափի թերթերի համար: |
| 10 | Կարիչի մետաղալարե կապեր, միջին | Կարիչի մետաղալարե կապեր, (միջին), բարձրորակ պողպատից, պատված ցինկի ծածկույթով, նախատեսված մինչև 50 թերթ 80գ/մ²–անոց թուղթ կարելու համար, №24/6: Փաթեթավորված ստվարաթղթե տուփի մեջ , 1000 հատ քանակով: Kangaro մակնիշի կամ համարժեք: |
| 11 | Նամակի ծրար, A5 ձևաչափի | Ծրար A5 չափի (148x210)մմ թղթի համար, առանց գրությունների, խիտ թղթից՝ նախատեսված գաղտնիություն պարունակող նամակների համար, առանց պատուհանի, սպիտակ, 1մ² մակերեսը՝ 100 գ զանգվածով, ինքնասոսնձվող |
| 12 | Թուղթ նշումների համար, սոսնձվածքով | Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, 1մ² մակերեսը ոչ պակաս 70 գ, չափածրարված տուփերով, տուփում ոչ պակաս 100 հատ: |
| 16 | Թանաքկնիքի բարձիկի համար | Թանաք կնիքի բարձիկի համար, ծավալը առնվազն 30 մլ., կապույտ և սև գույների (ընդհանուր քանակի մեջ համապատասխանաբար 80/20 % հարաբերակցությամբ: |

| | | |
|---|---|---|
| | Գրիչ գելային | **Գելային գրիչ,** տարբեր գույների, միջուկի երկարությունը 10 սմ, ծայրի **հաստությունը** 0.5-0.7 մմ, իրանը պլաստիկից կամ ալյումինե, ցանկացած **տեսակի կառու**ցվածքով, մեխանիզմով կամ ծայրի մասում կափարիչով: |
| 18 | Հաշվասարք գրասենյակային | **Գրասենյակային հաշվասարք, 12 նիշանի, առնվազն 16X13 սմ չափերով** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ ՇՄՆ «ԲԾԻԳ» ՊՀ**
ք.Երևան, Արմենակյան 129
**ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**
ՀՀ 900011064087
ՀՎՀՀ 01573524
Էլ. հասցե՝ info@cep.am
ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի
Պաշտոնակատար **Ա. Ոսկանյան**
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Դավիթ Հովհաննեսի Հովհաննիսյան» ԱՁ**
ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 11813012607100
ՀՎՀՀ՝ 20179887
Էլ. հասցե՝ hovhannisyan8118@gmail.com
**Տնօրեն՝ Դ. Հովհաննիսյան**
------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
« » 2020 թ. կնքված
**ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-20/11** ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | |
| | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| ...գրասենյակային նյութեր | 36750 | 36750 | 36750 | 64320 | 64320 | 64320 | 91880 | 91880 | 91880 | 91880 |

...արման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ ՇՄՆ «ԲԾԻԳ» ՊՀ** | **«Դավիթ Հովհաննեսի Հովհաննիսյան» ԱՁ** |
| ք.Երևան, Արմենակյան 129 | ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 56-46 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «ԱյԴի Բանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011064087 | Հ/Հ՝ 11813012607100 |
| ՀՎՀՀ 01573524 | ՀՎՀՀ՝ 20179887 |
| Էլ. հասցե՝ info@cep.am | Էլ. հասցե՝ hovhannisyan8118@gmail.com |
| ՀՀ ԲՆ «ԲԾԻԳ» ՊՀ-ի տնօրենի Պաշտոնակատար **Ռ. Ոսկանյան** | **Տնօրեն՝ Դ. Հովհաննիսյան** |
| ______________________ /ստորագրություն/ Կ.Տ | ______________________ (ստորագրություն) Կ.Տ. |

*Հավելված 3*
*«  »   2020 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________
հվհհ ______________

Պատվիրատու

______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________
հվհհ______________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  » «   » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը`
______________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը` ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «  » «  » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները`

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«   »   2020 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _______________-ի
Պատվիրատուի անունը                                        Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20  թ. _________________________-ին կնքված N _________________________
**համարը**                 պայմանագրի կնքման ամսաթիվը                           պայմանագրի
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ապրանքների | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_________________________
ազգանուն, անուն
_________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_________________________
ազգանուն, անուն
_________________________
ստորագրություն